# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արմենֆարմ ՍՊԸ-ն ԱՐԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 66 | Անիոս Լաբորատորիաներ | Անիոսժել 85 ՆՊՍ | Անիոսժել 85 ՆՊՍ | Անիոս Լաբորատորիաներ | Բաղադրությունը - դենատուրացված էթանոլ 65%, իզոպրոպանոլ 5%, ինչպես նաև խոնավեցնող, հարթեցնող, փափկեցնող, պաշտպանիչ հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի՝օժտված բարձր թափանցելիությամբ): Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Չպետք է պարունակի հոտավետ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բաղադրիչներ: Հականեխիչ գելը նախատեսված է վիրաբույժների ձեռքերի վիրաբուժական մշակման համար, բուժական անձնակազմի ձեռքերի հիգիենիկ մշակման համար՝ հաստատված ՀՀ Առողջապահության նախարարության մեթոդական հրահանգներով: Ախտահանիչ նյութը ունի մանրէասպան ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների, (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլյոզի միկոբակտերիաների), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր) նկատմամբ՝ ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով: Հակամանրէային երկարեցված ազդեցությունը պահպանվում է 3 ժամ: Փաթեթավորումը - 1 լ ծավալի պոլիէթիլենային տարա: Վտանգավորության աստիճանը- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 4-րդ, 5-րդ դաս: Տարան դոզավորող պոմպով է՝ 1 սեղմումը 1,5մլ, մեկ հիգենիկ մշակումը 3մլ- 30վրկ., մեկ վիրաբուժական մշակումը 6մլ - 90վրկ. : Մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում: 1լ նախատեսված է 333 հիգենիկ կամ 167 վիրաբուժական մշակման համար: Որակի հավաստագրի/երի առկայություն: Ունի ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ, ԵԱՏՄ պետական գրանցման վկայական: Միջոցը նոր է, չօգտագործած: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2-ի առկայություն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Արմենֆարմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՐԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 66 | | | | | |